վարեա զաշխարհս մեր։ Տուր մեզ զցանկալին խա-
ղաղութիւն և զկերակուր չափաւոր 'ի սնունդս
որդեկաց Քոց »։

Ը

ԵՐԳ ԱՌ ՆՈՅՆ ՍՐԲՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ

Ո՛վ անբսպառ ողորմութեանց Տիրուհի,
Երես յերկիր անկանիմք Քո առաջի,
Աչք յարտասուս աղերսաւորք, անսասան
Պահել ըզմեզ ընդ հովանեաւդ յաւիտեան։
Դու ես պաշտպան հանուրց սեռիս մարդկութեան
Զարդ և պարծանք մեր աշխարհիս Փոտոլեան։
Կոյսդ համբաւեալ, յեկեղեցւոջըս Հայոց,
Երևեցար փայլակնացայտ 'ի հուր բոց,
Ցառնուլ նոցա զայս մեր քաղաք 'ի մարտին։
Նոքա ինքեանք ոչ ուրացան, ասացին,
Զի բոցավառ ըզսըրբավայր Քո տեսին,
Ընդ որ ապչեալ, յահ և յերկիւղ պատեցան։
Դու փըրկեցեր ըզՔո որեարդ հայկազեան,
Մինչ զընային հալածական 'ի ծովու,
Հետամուտ լեալ 'ի թշնամեաց ահարկու.
Բեկեալ կայմիւ հաներ զնոսա 'ի յանքոյթ
Նաւահանգիստ, ըզթշնամիս կորուսեալ,
Ըզնաւս նոցին ախիւ գանձիւ ընկըզմեալ։
Իսկոյն ծանեան մերքըն՝ զերծեալք հըրաշիւք
Զի Քո էին կոյս Տիրամայր այն արդիւնք։
Դարձ արարեալ այսրէն 'ի մերըս աշխարհ
Ի Լով քաղաք առեր հանգիստ և դադար։
Անդ համբաւեալ, աշխարհ վըկայ, ըստ որում
Ետուր կաղաց, կուրաց, խոթից բժըշկութիւն։